Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 646 - Ա
որոշման

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ժպիտների արվեստանոց» բազմաֆունկցիոնալ տարածքի հիմնովին վերանորոգում՝ երեխաների ստեղծագործական հմտությունների զարգացման, աշխատանքների ստեղծման, ինքնավստահության բարձրացման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ՍՕԱՐ) հիմնադրամ՝ 150 Ն. Ռադնոր Չեսթեր Ֆ.200, Ռադնոր 19087 Փենսիլվանիա, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճուղի 19, ՀՎՀՀ՝ 00148272)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի Շիրակացու փողոց, 10 շենք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	11,052,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի Շիրակացու փողոց, 10 շենք, ՀՎՀՀ՝ 05552136)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հոկտեմբերի 6-ից մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ժպիտների արվեստանոց» բազմաֆունկցիոնալ տարածքի հիմնովին վերանորոգում 11,052,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հոկտեմբերի 6-ից մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և նախատեսվող գինը	«Ժպիտների արվեստանոց» բազմաֆունկցիոնալ տարածքի հիմնովին վերանորոգման աշխատանքների իրականացում 11,052,000 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ